796
Ş-52

1933

Գրադարանային թերթ չունի, վնասված է

02 NOV 2010

Ֆ. Կ. Գ. ԽՈՐԱՀՐԴԻ
ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՍԽՀ ՖԻԶԿՈՒԼՏ ՏԵԽՆԻԿՈՒՄԻ
1933—34
ՈՒՍ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

796
-59

1933 ԵՐԵՎԱՆ

5 SEP 2013

9486

Ֆ-16
Ց-59

ՀԱՄԽ-Ի ՀՈՂԺՈՂԿՈՍԱՏՐ ՑԵՎ ՀԱՅԱՍՏԱՐԿՈՒՄԻՐ ՖԻԶԿՈՒԼՏ ԲՅՈՒՐՈՆԵՐԻՆ ՑԵՎ ԴԻՆԱՄՈՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՑԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՖԻԶԿՈՒԼՏ ԽՈՐՀՐԴՆԵՐԻՆ

Նպատակ ունենալով Հանրապետական ֆիզկուլտ տեխնիկումի 33—34 թ. թ. ուսումնական տարվա ընդունելությունները դարձնել խիստ ՖԿ տեխնիկումի նպատակային ընդունելություն և վոչ չաբլոնացած տեղերի քանակական լրացման մտահոգություն, Ֆ.Կ.Գ.Խ.-ն հիշեցնում է ՖԿ բոլոր հանրապետական որգաններին, քաղաքային և շրջանային խորհուրդներին և պրոֆ. ՖԿ բյուրոներին այն մասին, վոր ՖԿ տեխնիկումը չնայած իր յերեք տարվա գոյության, դեռևս ապահովված չի անհրաժեշտ վորակյալ ուսանողությամբ, վորպիսի հանգամանքը բացատրվում է տեխնիկումի մասին վոչ լայն հասարակական կարծիք ստեղծելով։

Թույլ է մասսայական բացատրական աշխատանքի կազմակերպումը տեխնիկումի նշանակության և հետապնդած նպատակների մասին, վորից և բղխել է մինչև այժմ կատարված ընդունելությունների վատ կազմակերպումը և պատահական ու վոչ համապատասխան ուսանողության ընդգրկումը։ Ընդունված ուսանողները չեն ունեցել անհրաժեշտ թեորետիկ պատրաստականություն և այն առանձնահատուկ նախադրյալները, վորպիսին պահանջվում է ՖԿ տեխնիկում ընդունվող յուրաքանչյուր ուսանողից։

Վերոհիշյալ բացերն անպայմանորեն ազդել են տեխնիկումի ուսման վորակի վրա և չեն տվել այն եֆեկտը, վորպիսին պահանջվում է Համ. Կ(բ)Կ Կենտկոմի 31 թ. սեպտեմբերի 5-ի, 1932 թվի ոգոստոսի 25-ի և ՀՍԽՀ Կենտգործկոմի սեպտեմբերի 19-ի վորոշումները։

Ֆիզկուլտ տեխնիկում են ուղարկվել ուսանողներ, վորոնք չեն ունեցել պահանջվելիք առողջությունը և առ ժամանակ սովորելուց հետո ազատվել են տեխնիկումից՝ հիվանդության պատճառով։

Այս մասին իրազեկ դարձնելով ձեզ և կրկին անգամ հիշեցնելով այն հրամայական պահանջը, վոր տրվում է կուսակցության և կառավարության կողմից Հայաստանի ՖԿ կազմակերպությանը համապատասխան կադրերով ապահովելու մասին՝ առաջարկվում է.— ՖԿ տեխնիկումի 33—34 թ. ուս-տարվա ընդունելու-

թյուններին տալ բացառիկ նշանակություն, ուղեցույց ունենալով Համ.Կ(բ)Կ Կենտկոմի 31 թ. սեպտեմբերի 5-ի, 1932 թ. ողոտոսի 25-ի վորոշումները և այն 10 տարվա պայքարի փորձը, վորպիսին ունի Հայաստանի Ֆիզիքական կուլտուրայի կազմակերպությունը լողունգ ունենալով «Սպարտակիադան դիմավորել տեխնիկումի 33—34 թ. ուս-տարվա ընդունելությունների վորակական և քանակական ցուցանիշների լրիվ կատարումով»: Այս կապակցությամբ հրավիրել խորհրդակցություններ, վորտեղ դնել տեխնիկումի նշանակության և հետապնդած նպատակների մասին զեկուցումներ, քննության առնել 33—34 թ. ուս-տարվա ընդունելության խնդիրը և ձեր միջոցառումները տեխնիկումը կադրերի համապատասխան քանակով ապահովելու մասին:

Տանել լայն ագիտացիոն մասսայական բացատրական աշխատանք, վորպեսզի յուրաքանչյուր Ֆիզկուլտուրնիկ հասկանա տեխնիկումի նշանակության մասին, և այդ նշանակությունից յենելով ցանկություն հայտնի տեխնիկումում սովորելու համար: Բոլոր տեսակի մրցումների և սպարտակիադայի ժամանակ ընտրել լավագույն մարզիկներին, քաղաքական և թեորետիկ պատրաստականություն ունեցող ընկերներին, վորպես ՖԿ տեխնիկումի թեկնածու և նրանց նախապատրաստել այդ ուղղությամբ:

Գերագույն Խորհուրդը հավատացած է, վոր ՀՍԽՀ Ֆիզկուլտ զեկավար որգանները բոլոր տեսակի միջոցների կդիմեն տեղական կուս., ԼԿՑԵՄ ու պրոֆ. կազմակերպությունների միջոցով և մատնանշված ձևով հանրապետական ՖԿ տեխնիկումն ապահովելու անհրաժեշտ ուսանողության քանակով և լիակատար ու ճշգրիտ կերպով կկենտրոնացնեն կուսակցության ու կառավարության վորոշումները Ֆ. կադրերի պրոբլեմի հաջող լուծման համար:

ՀՍԽՀ Ֆիզկուլտ Գերագույն Խորհրդի
փոխ-նախագահ՝ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Կադրերի բաժնի վարիչ՝ Ղ. ՂԵՎՈՆԴՅԱՆ

1. ՀՍԽՀ ՖԻԶ-ԿՈՒԼՏ ՏԵԽՆԻԿՈՒՄԻ 33-34 ՈՒՍ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Ֆիզկուլտ Տեխնիկումն ընդունվել կարող են՝

ա) 17—25 տարեկան հասակ ունեցող բոլոր արտադրության մեջ աշխատող բանվորները, կոլխոզնիկները, սովխոզներում և ՄՏԿ-ներում աշխատողները, աշխատավոր մենատնտես գյուղացիները և խորհրդային ծառայողները:

բ) Գործուղվողները պետք է լինեն քաղաքականապես պատրաստված և աշխատանքի մեջ ստուգված հարվածային ֆիզկուլտուրնիկներ:

Ծանոթություն.— 33—34 թ. ուս. տարում մեծ ուշադրություն են նվիրվում աղջիկների և ազգային փոքրամասնությունների ընդունելությանը:

գ) Ընդունվողներից դիմումի հետ միասին պահանջվում և հետևյալ փաստաթղթերը. լրիվ 7-ամյա կրթության, սոցծագման, սոցդրության, գործուղման (տեղի ՖԿՄ կողմից) աշխատանքից ազատման (յեթե չի աշխատում համապատասխան փաստաթուղթ) վերջին աշխատանքի տեղից աշխատանքի դնահատական, առողջության, ծաղկի «Պ.Ա.Պ.» կրծքանշանի նորմաների քարտը կամ կրծքանշանի փաստաթուղթը, վկայական հարվածայնության մասին և յերեք լուսանկար:

2. ՖԻԶԿՈՒԼՏ ՏԵԽՆԻԿՈՒՄ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԸՆԴՈՒՆՎԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ

1. Ընդհանուր ֆիզիկական թույլ զարգացում.
2. Սրտի որգանական հիվանդություն, սրտի շապկի և խոշոր անոթների (արյան).
3. Սրտի ֆունկցիոնալ գործողության քայքայում.
4. Թոքերի և պլեվրային տուբերկուլյոզ, թե ակտիվ թե պասիվ դրության.
5. Թոքերի և սրտի ու պլեվրային ֆունկցիոնալ խանգարում.
6. Թոքերի ենֆեզիեմա և բրոնխիոլոգիեմա.
7. Սուր և կայուն արյան պակասում.
8. Ներքին գործարանների սուր և խրոնիկական հիվանդություններ կամ նրա ծանր հետևանքները.
9. Բոլոր տեսակի աղեթափություններ (աճուկային, ազդային, պորտային, սպիտակ գծի և վորովայնի պատի):
10. Վոսկորների և գեղձերի տուբերկուլյոզ.
11. Վահանագեղձի ֆունկցիոնալ ուժեղ խանգարում և մեծացում, վորը խանգարում է շորերին և հարևան մկաններին.
12. Բոլոր տեսակի չարորակ ուռուցքներ և բարորակներից նրանք, վորոնք խանգարում են ազատ շարժումներին:
13. Ծայրի անդամների սահմանափակ շարժումներ, վորոնք հետևանք են վոսկորների, ջղերի ու մկանների հիվանդության:
14. Ծայրանդամների կարճացում և ծռում, վորոնք կխանգարեն շարժումը:
15. Մեկ և ավելի մատների անշարժություն և բացակայություն

թյուն (թե վոտքի և թե ձեռքի)։ Հարթ նրբաններ, ծուռ վոտներ, մարմնի կուզություն, աչքի կուրություն և այլն։

16. Կաշվի խրոնիկական հիվանդություն.

17. Ցերիկամունքների հիվանդություն.

18. Ցեվ մնացած այն բոլոր հիվանդությունները, վորոնք խոչընդոտ են հանդիսանալու մարմնի ազատ զարգացմանը։

Բոլոր ընդունվողները յենթարկվելու յեն բժշկական խիստ քննության, այն բոլոր կանոններով, վոր ընդունված է բանակ ընդունվելուն (վորոշ խնդիրներում ավելի խիստ)։

3. Ի՞ՆՉ Է ՍՈՎՐԵՑՆՈՒՄ ՏԵԽՆԻԿՈՒՄԸ

Ֆիզկուլտ տեխնիկումը մյուս տեխնիկումներին հավասար սովորեցնում է հանրակրթական և հասարակագիտական առարկաներ, նույն քանակությամբ և նույն վորակով (Հայ գրականություն, ռ. լեզու, մաթեմատիկա, քիմիա, Ֆիզիկա, անատոմիա, տնտեսական աշխարհագրություն, քաղ. տնտեսություն, դասակարգային պայքարի պատմություն, դիալեկտիկական մատերիալիզմ և այլն)։

Ֆիզկուլտ տեխնիկումի և մնացած տեխնիկումների հիմնական տարբերությունը կայանում է նրանում, վոր այստեղ մասնագիտական առարկաները, բացառապես Ֆիզկուլտուրային բնույթ ունեցող առարկաներ յեն. (մարմնամարզություն, թեթև ատլետիկա, Ֆիզկուլտի սոցիալական հիմունքներ, սպորտ խաղեր, շարժական խաղեր և այլն)։ Զուգընթաց մի շարք ոժանդակ առարկաներ։

Տեխնիկումն իր վորակով հավասար է ուրիշ տեխնիկումներին։ Ֆիզկուլտ տեխնիկումի ամեն մի ուսանող ոգտվում է այն բոլոր իրավունքներից, ինչ վոր մնացած բոլոր տեխնիկումները ավարտողները, բարձրագույն ուսումնական հիմնարկներ ընդունվելիս։

4. Ի՞ՆՉ Է ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՖԻԶԿՈՒԼՏ ՏԵԽՆԻԿՈՒՄԸ

Ֆիզկուլտ տեխնիկումը պատրաստում է Ֆիզկուլտ հրահանգիչներ գործարանների, սովխոզների, կոլխոզների և հիմնարկությունների համար, Ֆիզկուլտ դասատուներ բոլոր տիպի ուսումնական հիմնարկներում (բացառությամբ Վուզերի) ինչպես նաև Ֆիզկուլտ կազմ. աշխատողներ, շրջանային խորհրդի պատ. քարտուղարներ և այլն։

5. ՊԱՀԱՆՋՎԵԼԻՔ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցուրաքանչյուր ընդունվողից պահանջվում է քննություններ յոթնամյակի յոթերորդ դասարանի ծրագրի ավարտման սահմաններում—հայոց լեզվից, մասամբ գրականությունից՝ (մաթեմատիկա, Ֆիզիկա, քիմիա, դաս. պատ. և ընթացիկ քաղաքականություն։ «Պ.Ա.Պ.»-ի կրծքանշանի նորմաներից) յեթե «Պ.Ա.Պ.» կրծքանշանի նորմաները ավել և նույնիսկ կրծքանշան և ստացել տեխնիկումը ընդունվելիս նորից ստուգման է յենթարկվում։

Բժշկական քննության յենթարկվելիս վերոհիշյալ պահանջներից վորևիցե մեկը չլրացնելիս չի ընդունվում։

6. ՌՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՒԼՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՍՊՍԱՐԿՈՒՄԸ

Ընդունվող ուսանողներից 60—70 տոկոս ստանում է թոշակ։ Թոշակ ստանալու համար անհրաժեշտ է դիմում ներկայացնել թոշակ բաշխող հանձնաժողովին հետևյալ փաստաթղթերով—ծնողների աշխատավարձի չափի մասին, ինքը կամ ծնողներն այլ յեկամուտ չունեն, կամ յեթե ունեն, վորքան է, համապատասխան մարմիններից միջնորդություն այդ մասին և այլն։

Թոշակառու հանձնաժողովը յելնելով փաստաթղթերից և տյալ ուսանողի կարիքի չափից վորոշում է կայացնում։ (Թոշակ բաշխող հանձնաժողովի բոլոր վորոշումները հաստատում է դիրեկցիան)։

Թոշակի չափը սեպտեմբերից մինչև հունվարի 1-ը 50 ռ. է բոլոր թոշակառուների համար։ Հունվարյան սեսյաներից հետո վճարելու յե դիֆերենցիալ թոշակ ըստ վորակի, առաջադեմ ուսանողները ստանում են 50—60 ռ.։

Շրջաններից յեկած ուսանողներին տրվում է հանրակացարան, մահճակալ, բոլոր դիմում տվողները պետք է բերեն իրենց հետ անկողին (մինչև տեխնիկումը ստանա իր պատվերի համաձայն վերոհիշյալները) բոլոր ուսանողները կցվում են ճաշարանների)։

Ուսանողների համար կազմակերպվելու յե լվացարան, վարչության և ուսանողության միջոցներով։

7. ՖԻԶԿՈՒԼՏ ՏԵԽՆԻԿՈՄԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ֆիզկուլտ տեխնիկումը ռազմականացված է. ուսանողները դրված են ռազմական դիսցիպլինայի տակ։ Ամեն առավոտ լիցք,

կատարում են հերթապահություն, բոլոր ուսանողներին տրվում է Ֆիզկուլտ Ֆորմա յերկու ձեռք, վարչության հաշվին:

Տեխնիկումում տիրում է ռազմական կարգապահություն: Բոլոր տեսակի հրամանները կատարվում է ռազմական կարգով: Տեխնիկումի ընդհանուր դիսցիպլինան բացառաբար դիտակցական է:

ԿՈՆՏԻՆԳԵՆՏԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

1. Ցերևան՝ 10 հոգի, Լենինական՝ 6 հոգի, Ղարաքիլիսա՝ 4 հոգի, Այրահվերդի՝ 4 հոգի, Շամշադին՝ 2 հոգի, Դիլիջան՝ 4 հոգի, Արթիկ՝ 4 հոգի, Աբարան՝ 2 հոգի, Աղբաբա՝ 2 հոգի, Ղուրդուղուլի՝ 3 հոգի, Վաղ-պատ՝ 3 հոգի, Ղամարլու՝ 4 հոգի, Կոտայք՝ 4 հոգի, Սիսա՝ 3 հ., Վեդի՝ 3 հ., Փաչալու՝ 2 հ., Քեչաղենդ՝ 3 հ., Գորիս՝ 3 հ., Ղափան՝ 4 հոգի, Մարտունի՝ 2 հ., Մեղրի՝ 2 հ., Նոր-Բայազետ՝ 3 հոգի, Ստեփանավան՝ 3 հոգի, Բասարգեչար՝ 3 հոգի:

Ցեթե տվյալ թեկնածուներ լինեն, վորոնք համապատասխանում են իհշյալ պահանջներին, շրջանային խորհուրդներին իրավունք է վերապահվում դորձուղղել այդպիսիներից—Ցերևան: Տեխնիկումն ունենալու յե 2 առաջին դուդընթաց խմբեր, ամեն մի կուրսում 35 հոգի:

Ծանոթություն.— Տեխնիկումի յերկրորդ կուրսի համար կատարվում են լրացուցիչ ընդունելություն, եկատարքննություններով: Կարող են ընդունվել այնպիսիները, վորոնք կկարողանան առաջին կուրսի անցած ծրագրով լրիվ քննությունները տալ:

Ծանոթություն.— Ցեթե յեկած ուսանողները չհամապատասխանեն տեխնիկումին հետ կուղարկվեն դորձադրված կազմակերպության հաշվին:

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴՀ ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐ ՖԻԶԿՈՒԼՏ ՏԵԽՆԻԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Պետհրատի տպարան—Ցերևան

Գրավիթ № 1423. Գրավիթ № 8150. Տիրաժ 600

ՀՀ Ազգային գրադարան
NL0308826

9486